ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **24/07/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Անահիտ Պետրոսյանը, Անահիտ Գևորգյանը, Արայիկ Սուլեյմանյանը, Սաշա Ստեփանյանը, Մերի Հովհաննիսյանը, Գրիշա Բաբայանը, Լուսինե Բաբայանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Ազոյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Հրանտ Արշակյանը, Վարդան Մանուչարյանը, Քրիստինե Ներսիսյանը, Արմեն Խաչատրյանը, Դավիթ Մարգարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 24-ի արտահերթ նիստի օրակարգը.
   1) Գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով մատուցված ծառայությունների դրույքաչափերը սահմանելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 014-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Սիսիան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի թիվ 18-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 071-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով մատուցված ծառայությունների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Խաչատրյանը զեկուցեց, որ համայնքի սեփականության գյուղատնտեսական տեխնիկաների միջոցով կատարվող ծառայությունների համար անհրաժեշտ է սահմանել դրույքաչափեր:
Ավագանու անդամ Ն. Յազուլյանը հարցրեց, թե ի՞նչ է հողաֆրեզը:
Ա. Խաչատրյանը պատասխանոց, որ հողի կոշտուկները մանրացնող գյուղ գործիք է:
Համայնքի ղեկավարը հավելեց, որ ստեղծված «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ-ում ներառվել է նաև գյուղ. տեխնիկան: Բնակիչների, վարչական ղեկավարների և մեխանիզատորների հետ հանդիպելով միասին որոշել են գները: Բնակիչները կարող են վարչական ղեկավարների մոտ գրանցվեն, ղեկավարները հայտերը ներկայացնեն ՀՈԱԿ-ին, ըստ այդմ էլ կբաշխվի: Բնակավայրերի ներսում ձմռանը կկատարվի նաև ձնամաքրման աշխատանքներ:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 072-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 014-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 014-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 354-ից 374 կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ օրինական դաշտ բերվող հողերն են, բոլորի վկայականներն արդեն պատվիրված է, կարող են արդեն դնել մրցույթի:
Ավագանու անդամ Բ. Թամրազովան հարցրեց ո՞վ է մշակել մինչ այդ:
Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ հողեր կան անմշակ են:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 073-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍԻՍԻԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերով, «Սիսիան» բարեգործական հիմնադրամի կանոնադրության 32-րդ կետով, 39-րդ կետի 7-րդ ենթակետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Սիսիան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր կազմը՝
   1) Հովսեփ Առաքելյան - Սիսիան համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
   2) Անիկ Գրիգորյան - Սիսիան համայնքի ավագնու անդամ, խորհրդի անդամ,
   3) Հրաչ Դանիելյան - Սիսիան համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ,
   4) Տիգրան Համբարձումյան - Սիսիան համայնքի ավագանու անդամ, խորհրդի անդամ,
   5) Արկադի Հովհաննիսյան - «ԳԱՀ Փարթներս» ՍՊԸ գլխավոր իրավախորհրդատու փաստաբան, խորհրդի անդամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի հիմնադրած «Սիսիան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 18-Ա որոշումը:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 074-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԻՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____